
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ (ԱՌԿՊ) ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

ԵՄԻՇՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՆԳՆ կրթահամալիրի փրկարար ծառայության և ճգնաժամային կառավարման ուսումնական ստորաբաժանում, աղետների ռիսկի կառավարման և քաղաքացիական պաշտպանության ամբիոնի ավագ դասախոս
DOI:10.61746/18292984-2026.1.28cmt-05

Համառոտագիր: Հոդվածում վերլուծվում են Աղետների ռիսկի կառավարման պլանի (ԱՌԿՊ) հայեցակարգային հիմքերը, կառուցվածքային մոդելն ու ներդրման հիմնարար սկզբունքները կրթական հաստատություններում: Առաջարկվում է ԱՌԿՊ-ի մշակման գործնական շրջանակ՝ հարմարեցված դպրոցական միջավայրի առանձնահատկություններին և առկա մարտահրավերներին: Հիմնավորվում է, որ ԱՌԿՊ-ն պետք է լինի դպրոցի կառավարման համակարգի անբաժանելի բաղադրիչը՝ երաշխավորելով անվտանգություն, ինստիտուցիոնալ դիմակայունություն և ուսումնական գործընթացի շարունակականություն աղետների ու արտակարգ իրավիճակների պայմաններում:

Առանցքային բառեր. Դպրոցի անվտանգություն, դիմակայունություն, աղետ, ռիսկ, խոցելիություն, կարողություն, արտակարգ իրավիճակներ, կանխարգելում:

«Ուսումնական հաստատությունները պետք է լինեն սովորողների անվտանգության ապահովման հիմնարար միջավայր: Այնուամենայնիվ, գլոբալ մակարդակում այդ անվտանգությունը հաճախ լիարժեք չէ. կլիմայական փոփոխություններով պայմանավորված՝ բնական աղետների հաճախականության և ինտենսիվության աճը լրջագույն մարտահրավեր է գործող կրթական ենթակառուցվածքների համար, որոնք հաճախ դիմակայուն չեն նմանատիպ սպառնալիքների նկատմամբ: Կառուցվածքային անհամապատասխանությունները, ինչպիսիք են՝ դասասենյակների և խաղահրապարակների ոչ բավարար սեյսմակայունությունը, սանիտարահիգիենիկ հարմարությունների սեռային անհամապատասխանությունը կամ կահավորման

անհամապատասխանությունը նորմատիվային պահանջներին, զգալիորեն բարձրացնում են հաստատությունների խոցելիությունը:

Ավելին, աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) կրթության պակասը, զուգորդվելով շենքային պայմանների խոցելիության հետ, ուղղակի վտանգ է ներկայացնում աշակերտների և մանկավարժական անձնակազմի կյանքի ու առողջության համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ դպրոցական անվտանգության ապահովումը դարձել է պետական և միջազգային կազմակերպությունների առաջնահերթություն: Այս խնդիրն ամրագրված է միջազգային առանցքային փաստաթղթերում և կոնվենցիաներում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում, Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակային ծրագրում, «Կայուն զարգացման 2030 օրակարգում», Կլիմայի փոփոխության մասին Փարիզյան համաձայնագրում և «Նոր քաղաքային օրակարգում», որոնք սահմանում են հարցի նկատմամբ համապարփակ և բազմակողմանի մոտեցումներ [4, 5, 9]:

Ներկայումս համաշխարհային կրթական հաստատությունները, հատկապես դպրոցները, գտնվում են բնական և տեխնաձին վտանգների մշտական ազդեցության գոտում: Դրանք ներառում են սեյսմիկ ռիսկերը, հրդեհները, տեխնաձին վթարները, ինչպես նաև կլիմայի փոփոխությամբ պայմանավորված և հաճախակիացող բնական աղետները:

Այս համատեքստում հրատապ անհրաժեշտություն է դառնում ուսումնական հաստատությունների ոչ միայն ֆիզիկական անվտանգության ապահովումը, այլև արտակարգ իրավիճակներին պատրաստվածության մակարդակի բարձրացումը: Այս խնդրի լուծման համալիր և համարժեք մեխանիզմ է համարվում Աղետների ռիսկի կառավարման պլանը (ԱՌԿՊ):

Միջազգային փորձի վերլուծությունը փաստում է, որ աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված արդյունավետ ռազմավարություններն զգալիորեն կրճատում են մարդկային կորուստները, պաշտպանում ենթակառուցվածքները և երաշխավորում կրթական գործընթացի անընդհատությունը: Այդ մոտեցումներն ընդգրկում են հետևյալ առանցքային ուղղությունները.

1. կրթական ենթակառուցվածքների կառուցվածքային անվտանգության բարելավում,
2. անվտանգության պլանավորում և կանոնակարգված ընթացակարգերի ներդրում,

3. կրթական և գործնական բաղադրիչ (վարժանքներ, իրազեկվածության բարձրացում),

4. համայնքային ներգրավվածության ապահովում:

ԱՌԿՊ-ն հիմնված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի (UNESCO) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի (UNICEF) կողմից մշակված մեթոդաբանության վրա, որը համակցում է դպրոցական անվտանգությունը և աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) գործընթացները: Այս կազմակերպություններն առանձնացնում են դպրոցի դիմակայունության ապահովման երեք փոխկապակցված բաղադրիչ [1, 2, 3, 9].

- Ֆիզիկապես անվտանգ կրթական միջավայր և ենթակառուցվածքներ. Դպրոցական շենքերի և ենթակառուցվածքների սեյսմակայունության ու դիմակայունության ապահովում՝ բնական և տեխնածին վտանգների նկատմամբ: Սա ենթադրում է շինարարական նորմերի խիստ պահպանում և առկա շինությունների անվտանգային պարբերական գնահատում:
- Աղետների կառավարում և դիմակայունության պլանավորում. Արտակարգ իրավիճակներին պատրաստվածության, արձագանքման և հետադեպային վերականգնման գործուն մեխանիզմների ու պլանների մշակում և ներդրում: Այս բաղադրիչը կենտրոնանում է կազմակերպչական պատրաստվածության և կառավարման արդյունավետության վրա:
- Աղետների ռիսկի նվազեցման կրթություն. ԱՌՆ գիտելիքների և հմտությունների ինտեգրում ուսումնական ծրագրերում: Նպատակն է սովորողների և անձնակազմի շրջանում ձևավորել անվտանգ կենսագործունեության մշակույթ՝ նրանց զինելով ռիսկերը ճանաչելու և ճգնաժամային իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողություններով:

ԱՌԿՊ-ն դիտարկվում է որպես ռիսկերի համապարփակ կառավարման համակարգ, որի նպատակն է սույն «արտակարգ իրավիճակներին արձագանքման պլանից» անցում կատարել դեպի ամբողջական և շարունակական գործընթացի: Այն ենթադրում է փոխկապակցված գործողություններ դպրոցական, համայնքային և պետական կառավարման մակարդակներում:

Հիմնվելով միջազգային առաջավոր փորձի և տեղական առանձնահատկությունների վրա՝ ԱՌԿՊ-ն պետք է ունենա հստակ հայեցակարգային կառուցվածք, որն ուղղված կլինի աղետների կանխարգելմանը, պատրաստվածության մակարդակի բարձրացմանը և ճգնաժամային իրավիճակներում արդյունավետ արձագանքման ապահովմանը:

ԱՌԿՊ-ի արդյունավետությունը պայմանավորված է դրա կառուցվածքային ամբողջականությամբ, որն ընդգրկում է նախապատրաստական փուլից մինչև շարունակական մոնիտորինգի գործընթացները:

Աղետների ռիսկի կառավարման պլանի (ԱՌԿՊ) արդյունավետությունը նախևառաջ պայմանավորված է դրա կառուցվածքային ամբողջականությամբ, որն սկսվում է հայեցակարգային նպատակադրմամբ և իրավական հիմքերի հստակ սահմանմամբ: Պլանի մշակման մեկնարկային կետը կրթական հաստատության համար դրա ռազմավարական դերի որոշումն է, ինչը ենթադրում է մարդկային կյանքերի պաշտպանության և կրթության անընդհատության ապահովման նպատակների համադրում ազգային օրենսդրության ու անվտանգության պետական քաղաքականության պահանջների հետ: Այս գործընթացի հաջորդ կարևոր օղակը նախապատրաստական փուլն է, որի ընթացքում ձևավորվում է Աղետների ռիսկի կառավարման խորհուրդը: Վերջինս պլանի իրականացման պատասխանատու մարմին է, որտեղ հստակ սահմանվում են անդամների գործառույթներն ու աշխատակարգը՝ ապահովելով դպրոցական անձնակազմի լիարժեք ներգրավվածությունը կառավարման բոլոր մակարդակներում[8]:

Պլանի մեթոդաբանական առանցքը ռիսկերի համալիր գնահատումն ու վերլուծությունն է, որն իրականացվում է տվյալների պարբերական հավաքագրման և խոցելիությունների բացահայտման միջոցով: Հետազոտական այս փուլն ընդգրկում է ինչպես կառուցվածքային գործոնները՝ շենքային պայմանները, տեղանքն ու ենթակառուցվածքները, այնպես էլ ոչ կառուցվածքային՝ սոցիալական և կազմակերպչական խոցելիությունները [2, 3, 7]:

Կիրառելով **Վտանգ × Խոցելիություն** մատրիցային մոդելը՝ հնարավոր է լինում հաշվարկել ռիսկի գործակիցը, որը հիմք է դառնում առավել հավանական ու վտանգավոր սցենարների (երկրաշարժ, հրդեհ և այլն) դասակարգման և միջոցառումների առաջնահերթության սահմանման համար:

$$R = H \times V / C$$

Որտեղ՝

R (Risk) - Ռիսկի մակարդակը,

H (Hazard) - Վտանգի հավանականությունը,

V (Vulnerability) – Խոցելիությունը,

C (Capacity) - Կարողությունները (պատրաստվածությունը):

Այս ամենին հաջորդում է ռիսկի նվազեցման և մեղմման ռազմավարությունը, որը դիտարկվում է երկու փոխկապակցված հարթություններում: Կառուցվածքային կամ ֆիզիկական բաղադրիչն ուղղված է դպրոցական շենքերի սեյսմիկ դիմակայունության բարձրացմանը, անվտանգ տարհանման ուղիների նախապատրաստմանը և ժամանակակից ազդարարման համակարգերի ներդրմանը, ինչն ուղեկցվում է առաջին օգնության ու հրդեհաշիջման պարագաների ապահովմամբ: Զուգահեռաբար, ոչ կառուցվածքային միջոցառումները կենտրոնանում են մարդկային կապիտալի զարգացման վրա՝ ԱՌՆ թեմաների ինտեգրումն ուսումնական ծրագրերում, պարբերական վերապատրաստումներն ու վարժանքները դարձնելով անվտանգ կենսագործունեության մշակույթի անկյունաքարը: Այս համատեքստում առանցքային նշանակություն ունի համայնքային ներգրավվածությունը, որը միավորում է ծնողների և տեղական ինքնակառավարման մարմինների ռեսուրսները պլանի իրականացման գործում:

Ճգնաժամային իրավիճակներում գործողությունների օպերատիվությունն ապահովելու նպատակով ԱՌԿՊ-ն ներառում է արագ արձագանքման ստանդարտ ընթացակարգեր (SOPs): Դրանք կանոնակարգում են ազդարարման, տարհանման, պատուպարման, ինչպես նաև առաջին բժշկական ու հոգեբանական աջակցության ճշգրիտ հերթականությունը՝ երաշխավորելով աղետի պահին պատասխանատվության հստակ կառուցվածք: Վերջապես, ԱՌԿՊ-ն պետք է դիտարկվի որպես դինամիկ և ինստիտուցիոնալացված գործընթաց, որի կենսունակությունն ապահովվում է պարբերական վերանայումների, միջգերատեսչական համագործակցության և կայուն ֆինանսավորման մեխանիզմների միջոցով: Նման համապարփակ մոտեցումը հնարավորություն է տալիս իրականացնել ինչպես հրատապ ենթակառուցվածքային բարելավումներ, այնպես էլ պահպանել

անձնակազմի պատրաստվածության բարձր մակարդակը փոփոխվող ռիսկերի պայմաններում:

Հայաստանի Հանրապետության փորձը հաստատում է ԱՌԿՊ-ների կիրառման գործնական արդյունավետությունը տեղական ռիսկային և խոցելի աշխարհագրական պայմաններում: Մասնավորապես, ՅՈՒՆԻՍԵՖ-ի նախաձեռնությամբ 2020-2021 թվականներին ԱՌԿՊ-ներ են մշակվել սահմանամերձ 48 դպրոցների համար, ինչը շարունակական բնույթ է կրել նաև հետագա տարիներին՝ 2022-2023 թվականներին ընդգրկելով ևս 36, իսկ 2025 թվականին՝ 5 հաստատություն [6]: Այս նախաձեռնությունները կրում են համալիր բնույթ. պլանների մշակմանը զուգահեռ դպրոցներին տրամադրվում են պաշտպանական փաթեթներ, որոնք ներառում են կրակմարիչներ, ազդանշանային համակարգեր, տարհանման նշաններ և առաջին օգնության հավաքածուներ:

Նմանատիպ ծրագրերի հրատապությունը հիմնավորվում է այն մտահոգիչ վիճակագրությամբ, ըստ որի՝ Հայաստանում դպրոցական շենքերի շուրջ 80 տոկոսը չի համապատասխանում գործող շինարարական նորմերին: Այս հանգամանքն առավել է ընդգծում ռիսկերի գնահատման և ենթակառուցվածքների թիրախային բարելավման անհրաժեշտությունը, որտեղ ԱՌԿՊ-ն հանդես է գալիս որպես ռազմավարական գործիք:

ԱՌԿՊ-ի իրականացումը դպրոցական միջավայրում ապահովում է մի շարք առանցքային գործառույթներ: Այն նախևառաջ երաշխավորում է աշակերտների և մանկավարժական անձնակազմի կյանքի անվտանգությունը՝ ստեղծելով աղետներին դիմակայելու կազմակերպչական հիմքեր: Բացի այդ, պլանավորված միջոցառումները նպաստում են կրթական ենթակառուցվածքների պաշտպանությանը և ապահովում ուսումնական գործընթացի անընդհատությունն անգամ հետադեպային վերականգնողական փուլում:

Ավելին, ԱՌԿՊ-ն խթանում է համայնքային ներգրավվածությունը՝ դպրոցի շուրջ ձևավորելով սոցիալական պատասխանատվության և փոխօգնության մշակույթ: Լինելով լիարժեք համատեղելի միջազգային և ազգային չափորոշիչների հետ՝ այս փաստաթուղթը դառնում է կրթական քաղաքականության անբաժանելի մասը, որը թույլ է տալիս արդյունավետորեն արձագանքել ճգնաժամային իրավիճակներին և նվազեցնել հնարավոր կորուստների ծավալը:

Կատարված վերլուծությունից եզրակացնում ենք, որ ԱՌԿՊ-ն չպետք է դիտարկվի որպես սոսկ ստատիկ փաստաթուղթ կամ արտակարգ իրավիճակներին արձագանքման մեկանգամյա միջոցառում: Այն շարունակական և դինամիկ գործընթաց է, որն իր մեջ ներառում է ռիսկերի նախագծումը, գնահատումը, թիրախային ուսուցումը, համայնքային ներգրավվածությունը և պարբերական մոնիտորինգը: Հայաստանի Հանրապետության համատեքստում, հաշվի առնելով երկրի բարձր սեյսմիկ ռիսկայնությունն ու դպրոցական շենքերի տեխնիկական վիճակը, ԱՌԿՊ-ի ներդրումը դառնում է կրթական համակարգի դիմակայունության ապահովման հրատապ պահանջ:

Հետազոտության արդյունքների հիման վրա՝ առաջարկվում է ձևավորել ԱՌԿՊ-ների մարզային համակարգված կառուցվածք, որը կապահովի պետական, համայնքային և դպրոցական մակարդակների փոխգործակցությունը: Անհրաժեշտ է օրենսդրորեն կանոնակարգել ԱՌԿ պլանի միասնական ձևն ու մշակման մեթոդաբանությունը՝ դրանք հաստատելով համապատասխան նորմատիվային իրավական ակտով: Սա հիմք կդառնա պլանով սահմանված գործառույթների կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացման և պատասխանատվության մեխանիզմների, այդ թվում՝ վարչական վերահսկողության գործիքակազմի ներդրման համար:

Զուգահեռաբար, առաջնահերթություն պետք է դառնա ենթակառուցվածքային բարելավումների, անվտանգության սարքավորումների ձեռքբերման և պարբերական վարժանքների համար կայուն ֆինանսավորման աղբյուրների նախագծումը: Միջազգային մասնագիտացված կազմակերպությունների փորձի ներգրավումը և ԱՌՆ ծրագրերի շարունակական համակարգումը թույլ կտան ապահովել ԱՌԿՊ-ների համապատասխանությունը փոփոխվող ռիսկերին ու միջազգային չափորոշիչներին: Վերոգրյալ քայլերի համակարգված իրականացումը հնարավորություն կտա ԱՌԿՊ-ն վերածել դպրոցների անվտանգության և դիմակայունության արդյունավետ գործիքի՝ երաշխավորելով սովորողների, մանկավարժների և ողջ համայնքի պաշտպանվածությունը:

DISASTER RISK MANAGEMENT PLAN (DRMP) AS A PREREQUISITE FOR SCHOOL SAFETY

YEMISHYAN HOVHANNES

Senior Lecturer at the Chair of Disaster Risk Management and Civil Protection,
Rescue Service and Crisis Management Educational Unit,
Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

Abstract. The article analyzes the conceptual foundations, the structural model, and the key principles for implementing a Disaster Risk Management Plan (DRMP) in educational institutions. A practical framework for DRMP development is proposed, tailored to the specific characteristics of the school environment and the challenges it faces. It is argued that the DRMP should become an integral component of the school management system, ensuring safety, institutional resilience, and continuity of the educational process in the event of disasters and emergencies.

Key words: school safety, resilience, disaster, risk, vulnerability, capacity, emergency, prevention.

ПЛАН УПРАВЛЕНИЯ РИСКАМИ СТИХИЙНЫХ БЕДСТВИЙ (ПУРСБ) КАК ОСНОВА БЕЗОПАСНОСТИ ШКОЛЫ

ЕМИШЯН ОГАНЕС

старший преподаватель кафедры
управления рисками стихийных бедствий и гражданской защиты
Учебного подразделения спасательной службы и кризисного управления
Образовательного комплекса Министерства внутренних дел
Республики Армения

Аннотация. В статье анализируются концептуальные основы, структурная модель и основные принципы внедрения плана управления рисками стихийных бедствий (ПУРСБ) в образовательных учреждениях; предлагается практическая основа для разработки ПУРСБ, адаптированного к особенностям школьной среды и существующим вызовам; обосновывается, что ПУРСБ должен быть неотъемлемым компонентом системы управления школой, гарантируя безопасность, институциональную устойчивость и непрерывность учебного процесса в условиях стихийных бедствий и чрезвычайных ситуаций.

Ключевые слова: безопасность школы, устойчивость, стихийные бедствия, риск, уязвимость, потенциал, чрезвычайные ситуации, профилактика.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <https://www.unicef.org/documents/CCRI-DRM>
2. Children's Climate Risk Index-Disaster Risk Model (CCRI-DRM) Subnational Assessment Initiative. UNICEF, June 2024
3. Geospatial Risk Analysis and Visualization. UNICEF, Nov. 2023
4. <https://www.unesco.org/en/disaster-risk-reduction/school-safety>
5. <https://knowledge.unicef.org/CEED/resource/comprehensive-school-safety-framework-2022-2030-child-rights-and-resilience-education>
6. <https://www.unicef.org/armenia/en/reports/climate-landscape-analysis-children-armenia>
7. <https://knowledge.unicef.org/child-nutrition-and-development/resource/childrens-climate-risk-index-disaster-risk-model-ccri-drm-subnational-guidance>
8. UNICEF POLICY ON SAFEGUARDING Document number: POLICY/DAPM/2024/001 v. June 6, 2025
9. Comprehensive School Safety Framework 2022-2030: UNESCO 2022

Ներկայացման ամսաթիվը՝ 04.03.2025
Ներկայացվել է տպագրության՝ 11.03.2026